

## **Եղեռնի Ոգեկոչման 97ամեակի Յուշահանդես Երեքշաբթի, Ապրիլ 24, 2012, 1:30 կ.ե.**

Լոս Անճեյլըսի եւ շրջակայքի հայուհիւնը, Զայկական Ցեղասպանութեան տարելիցը պիտի նշէ պաշտօնական յուշահանդեսով մը՝ Մոնթպելլոյի, Պիքնել Փարքի Զայկական Ցեղասպանութեան Յուշարձանին առջեւ, Երեքշաբթի, Ապրիլ 24ին:

Յուշահանդեսի բաժինը պիտի ընդգրկեն պատգամներ հայ եւ օտար քաղաքական դէմքերու կողմէ, հոգեհանգստեան պաշտօն մասնակցութեամբ գաղութի բոլոր կրօնական համայնքներու ներկայացուցիչներուն եւ ծաղկեփունջերու զետեղում մասնակից կազմակերպութիւններուն կողմէ: Յուշահանդեսի պաշտօնական բաժինը պիտի սկսի ժամը 1:30ին եւ տեւէ մինչեւ ժամը 3:30:

Յուշահանդեսի կազմակերպութիւնը ստանձնած է Զայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճեյլըսի Միացեալ Մարմինը: Սոյն Մարմինը կազմուած է Լոս Անճեյլըսի հայկական կազմակերպութիւններու հիմնական մեծամասնութեան ներկայացուցիչներէն:

Զայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Լոս Անճեյլըսի Միացեալ Մարմինը սոյն կոչով կը դիմէ շրջանի բոլոր հայորդիներուն անպայմանօրէն ներկայ ըլլալու սոյն յուշահանդեսին, ինչպէս նաեւ իրենց խումներամ մասնակցութիւնը բերել՝ գաղութն ներս կազմակերպուող ու Եղեռնի տարելիցին նուիրուած բոլոր միջոցառումներուն:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ  
ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ - ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ  
Մարտ 1, 2012**